


**ՄՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՑՐԱՀԱՄ ՋՐԵՐ**

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական դիտարկումներն իրականացվել են հանրապետության ազգային ցանցում ընդգրկված 109 ստորերկրյա ջրաղբյուրում, որոնք ներառում են 25 շատրվանող հորատանցք, 44 չշատրվանող հորատանցք և 41 բնաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի դիտարկումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ: Ջրի որակի ուսումնասիրության նպատակով ջրի նմուշառումը կատարվում է տարին 2 անգամ՝ մայիս և նոյեմբեր ամիսներին՝ 51 դիտակետերից:

**Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք**

Հյուսիսային ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 2 բնաղբյուրում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը: Հաղարծինի N2058 դիտակետում նկատվել են ծախսի աննշան իջեցումներ, իսկ N2059 դիտակետում՝ կայուն վիճակ:

N2058 դիտակետում իրականացվել են որակի դիտարկումներ, հանքայնացման արժեքը կազմել է 0.62գ/լ, իսկ կոշտության արժեքը՝ 2.81մգ.համ/լ:



## Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք



Ախուրյանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են թվով 40 դիտակետում՝ 11 բնադրյալում, 5 շատրվանոց և 24 չշատրվանոց հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը, իսկ 19 դիտակետից կատարվել է նմուշառում քիմիական անալիզի համար:

Ախուրյանի ՋԿՏ-ի Արարատյան գոգավորության սահմանում նկատվում է ստորերկրյա ջրերի մակարդակի անընդհատ իջեցում: Ջրերի ծախսի և մակարդակի տատանումները զգալի են հատկապես Արարատյան գոգավորության հյուսիս-արևմտյան մասի դիտակետերում:

Կախված ջրառի քանակից փոփոխվում է նաև ստորերկրյա ջրերի որակական կազմը:


Համաձայն կատարված դիտարկումների Գյումրիի գոգավորությունում չեն նկատվում ստորերկրյա ջրային ռեսուրսների սպառման կամ որակի վատթարացման երևույթներ, իսկ ստորերկրյա ջրերի ներկա վիճակը կարելի է գնահատել լավ: Փաստը պայմանավորված է գոգավորության ստորերկրյա ջրերի շահագործական պաշարների սահմանափակ օգտագործմամբ:

Ջրի մակարդակի իջեցումը կամ ծախսի նվազումը կարող է հանգեցնել ընդհանուր հանքայնացման և կոշտության արժեքների աճի:




Շատրվանոց հորատանցքեր  
Ծախս, լ/վ

Ախուրյանի ՋԿՏ




Չշատրվանոց հորատանցքեր  
Մակարդակ, մ




Ախուրյանի ՋԿՏ



Չշատրվանոց հորատանցքեր  
Մակարդակ, մ

Ախուրյանի ՋԿՏ








**Հրագրանի ջրավազանային կատավարման տարածք**

Հրագրանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են թվով 32 դիտակետում, այդ թվում՝ 10 բնադրյուրում, 9 շատրվանող և 13 չշատրվանող հորատանցքում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը, իսկ 13 դիտակետից կատարվել են նմուշառումներ քիմիական անալիզների համար:

Համեմատաբար կայուն ծախս է նկատվում Կարբի գյուղի N1636, Ապարան քաղաքի N2051 բնադրյուրներում: Տարվա ընթացքում աննշան փոփոխություններ են նկատվում նաև ընդհանուր հանքայնացման և ընդհանուր կոշտության մեծություններում, քանի որ ջրերի որակական և քանակական փոփոխությունները պայմանավորված են միայն բնական պայմաններով:


Ջրերի ծախսի և մակարդակի փոփոխությունները զգալի են Հրագրանի ՋԿՏ-ի Արարատյան գոգավորության տարածքում գտնվող N78, N1523, N1519, N1526 դիտակետերում:

Ջրի մակարդակի իջեցումը կամ ծախսի նվազումը կարող է հանգեցնել ընդհանուր հանքայնացման և կոշտության արժեքների աճի:




Չատրվանող հորատանցքեր

Հրազդանի ՋԿՏ




Գրունտային ջրեր

Հրազդանի ՋԿՏ




Ընդհանուր լուծված աղեր

Հրազդանի ՋԿՏ



Նիտրատ իոն




Հրազդանի ՋԿՏ



## Մևանի ջրավազանային կառավարման տարածք


Մևանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 15 դիտակետում՝ 7 բնադրյուրում, 7 շատրվանող և 1 չշատրվանող հորատանցքում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը, իսկ 8 դիտակետերից կատարվել են նմուշառումներ քիմիական անալիզների համար:

Բոլոր դիտակետերում ծախսերի տատանումները աննշան են և կրում են բնական բնույթ: Աննշան փոփոխություններ են նկատվում նաև ստորերկրյա ջրերի ընդհանուր հանքայնացման և ընդհանուր կոշտության արժեքներում:




Շատրվանոցի հորատանցքեր

Սևանի ՋԿՏ




Ընդհանուր լուծված աղեր

Սևանի ՋԿՏ



Նիտրատ իոն

Սևանի ՋԿՏ







**Արարատյան ջրավազանային կառավարման տարածք**





Արարատյան ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 23 դիտակետում՝ 10 բնադրյուրում, 3 շատրվանող և 10 չշատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը, իսկ 10 դիտակետերից կատարվել են նմուշառումներ քիմիական անալիզների համար:

Արարատյան ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի մակարդակի և ծախսի նշանակալի փոփոխություններ են նկատվում Արարատյան գոգավորության հարավ- արևելյան մասի դիտակետերում: Համաձայն 2021թ դիտարկումների N2062 (ք.Արտաշատ) և N2063 (Դալար) դիտակետերում (շատրվանող հորատանցքեր) միջին ամսական ծախսերի ցածր արժեքները նկատվում են ոռոգման շրջանում համապատասխանաբար 0.12լ/վ-ից մինչև 0.31լ/վ և 0.13լ/վ-ից մինչև 0.95լ/վ: Ոռոգման շրջանից հետո նախնական ծախսերը վերականգնվել են:

Ոռոգման շրջանում ստորերկրյա ջրերի մակարդակի տատանումները աննկատ են, Լուսառատ (N2074), Եղեգնավան (N2065) և Արարատ (N2076) բնակավայրերի դիտակետերում: Արարատ քաղաքից դեպի հարավ- արևելք ոռոգումը կատարվում է նաև գետային հոսքով, իսկ հորատանցքերով կատարվող ջրառը համեմատաբար սահմանափակ է:


Ջրի մակարդակի իջեցումը կամ ծախսի նվազումը կարող է հանգեցնել ընդհանուր հանքայնացման և կոշտության արժեքների աճի:






Ընդհանուր լուծված աղեր

Արարատյան ՋԿՏ



Նիտրատ իոն




Արարատյան ՋԿՏ



**Հարավային ջրավազանային կառավարման տարածք**

Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտա-  
դիտարկումներ կատարվել են 7 բնադրյուրում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաս-  
տիճանը և ծախսը, իսկ 4 դիտակետերից կատարվել են նմուշառումներ քիմիական  
անալիզների համար:

Ծախսի և որակական կազմի տատանումները աննշան են և կրում են բնական  
բնույթ:



Նիտրատ իոն

Հարավային ՋԿՏ

